# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _______________ 2015 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԿՐՃԱՏՄԱՆ ԿԱՄ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Օրգանական գյուղատնտեսության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողությունը, դրա կրճատման կամ երկարաձգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի ________________-ի
N ______-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ, ԴՐԱ ԿՐՃԱՏՄԱՆ ԿԱՄ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողությունը, դրա կրճատման կամ երկարաձգման պայմանները:

## II. ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

2. Օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանն սկսվում է օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողի կողմից օրգանական գյուղատնտեսության միավորում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան արտադրություն սկսելու վերաբերյալ սերտիֆիկացման մարմին հայտ ներկայացնելու պահից:

3. Անցումային շրջանի տևողությունն օրգանական բուսաբուծություն իրականացնող միավորում սահմանվում է`

1) միամյա և երկամյա մշակաբույսերի համար` 24 ամիս, նախքան օրգանական մշակաբույսի ցանքը կամ տնկումը.

2) արոտավայրերի համար` 24 ամիս, նախքան խոտի օրգանական արածեցման նպատակով օգտագործումը.

3) բազմամյա մշակաբույսերի և խոտհարքների համար (բացի արոտավայրերից)` 36 ամիս, մինչև առաջին օրգանական բերքի հավաքը:

4. Սովորական (ավանդական) գյուղատնտեսական արտադրական միավորից օրգանական բուսաբուծություն իրականացնող միավոր գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ներմուծման դեպքում անցումային շրջանի տևողությունը սահմանվում է`

1) խոշոր եղջերավոր անասունների և ձիերի համար`

ա. լիահասակ կենդանիներ, աճեցված մսի արտադրության նպատակով` 12 ամիս կամ իրենց կյանքի տևողության առնվազն երեք քառորդը,

բ. հորթեր, աճեցված մսի արտադրության նպատակով` վեց ամիս, եթե ներմուծվել են մինչև վեց ամսական հասակը, անմիջապես կաթնային շրջանի ավարտից հետո,

գ. կաթ և կաթնամթերք արտադրելու նպատակով` ինը ամիս.

2) ոչխարի և այծի համար`

ա. աճեցված մսի արտադրության նպատակով՝ վեց ամիս,

բ. կաթ և կաթնամթերք արտադրելու նպատակով՝ ինը ամիս.

3) խոզերի համար՝ աճեցված մսի արտադրության նպատակով՝ վեց ամիս.

4) թռչունների համար՝

ա. աճեցված մսի արտադրության նպատակով՝ ամբողջ կյանքի ընթացքում,

բ. ձվի արտադրության նպատակով՝ վեց շաբաթ.

5) մեղվաբուծության համար՝ 12 ամիս: Այդ ընթացքում ամբողջ մեղրամոմը պետք է փոխարինվի օրգանական մեղրամոմով.

6) ձկնաբուծության համար՝ կենդանի օրգանիզմի կյանքի տևողության չափով, կամ նվազագույնը 12 ամիս:

## III. ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ԿԱՄ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողությունը կարող է երկարաձգվել կամ կրճատվել լիազոր մարմնի որոշմամբ՝ սերտիֆիկացման մարմնի առաջարկության հիման վրա:

6. Սերտիֆիկացման մարմինն օրգանական գյուղատնտեսության միավորի օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողության կրճատման կամ երկարաձգման վերաբերյալ առաջարկությունը՝ հիմնավորումներով, պատշաճ կարգով ներկայացնում է լիազոր մարմին:

7. Լիազոր մարմինը սերտիֆիկացման մարմնի առաջարկությունն ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, ընդունում է որոշում օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողության կրճատման կամ երկարաձգման մասին:

8. Լիազոր մարմնի որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով տրամադրվում է սերտիֆիկացման մարմնին:

9. Լիազոր մարմնի՝ օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողության կրճատման կամ երկարաձգման մասին որոշումը տասնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

10. Օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողությունը կարող է կրճատվել 12 ամսով միայն օրգանական բուսաբուծություն իրականացնող միավորում՝ ելնելով հողատարածքի նախկինում օգտագործման վիճակից՝ հողը երկու կամ ավելի տարիներ մշակված չլինելու դեպքում:

11. Օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողությունը մեղվաբուծության համար կարող է երկարաձգվել 12 ամսով, եթե անցումային շրջանի 12 ամսվա ընթացքում մեղրամոմն ամբողջությամբ չի փոխարինվել օրգանական մեղրամոմով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ